№ 107 ՇԱԲԱԹ 18 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 18 ՄԱՅԻՍԻ № 107

Տարեկան գինը 10 ռուբլի. Կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿ. Վ.ԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտարարում է, որ ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ՝ ամառային բնակարանը
ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ պատճառով
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ
երեկոյթը, որ նշանակված էր մայիսի 18-ին, կը կայանայ մայիսի 25-ին նոյն տեղը հետեւեալ ծրագրով՝

I

Սայաթ-Նովայի երգերը կերգեն աշուղ-Հավըրս իր [illegible]

II

Նոյն խումբը կը կատարի արեւելեան երգեր և եղանակներ, սօլօնուագ և խմբական։ Սայաթ-Նովայի երգերից կարտասանեն պ.պ. Ն. Աղբալեան, Գ. Բաշինջաղեան, Յ. Թումանեան, Ն. Ցարոյ, Ա. Քալանթար և ուրիշները։ Աշուղական մրցութիւն (բաս մանել). յաղթողը կը ստանայ ընդունված նուէրը։

III

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԶԳԵՍՏՆԵՐՈՎ.
Բեմը արեւելեան ճաշակով կը զարդարէ նկարիչ Գ. Բաշինջաղեանը։
Վարչութիւնը խնդրում է հասարակութեան՝ ով կարող է թող շնորհ բերէ երեկոյթին Թիֆլիսի հագուստներով։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Տեղերի գները. I կարգ 3 ր. 10 կ.—II կարգ 2 ր. 60 կ.—III և IV կարգ 2 ր. 10 կ. V—VIII կարգ 1 ր. 60 կ.—IX—XII կարգ 1 ր. 35 կ.—XIII—XV կարգ 1 ր. 10 կ., կանգնելու տեղերը 75 կ., իսկ աշակերտների համար 50 կ.։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թիֆլիսի ժողովարանում և Ե. Ծատուրեանի մագազինում։

Երեկոյթի կառավարչուհի՝ իշխ. Մարիամ Թումանեան
(ա. գ.) առ. 389. 3—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, մայիսի 19-ին, երեկոյեան ժամը 8½-ին
Տեղի կունենայ
ԵՐԿՐՈՐԴ եւ ՎԵՐՋԻՆ
ԵԱՊՕՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՐԵԿՈՅԹԸ
ՀԱՆԱԿՕ-ՕՕՏԱՅԻ մասնակցութեամբ.
I. ԱՐՏԻՍՏՈՒՀՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ

Առաջին բաժանմունք.—
I ՊԱՐԵՐ
Ուսման I տարին—Մանկական պարեր.
» II » —Հարուսամէ (Գարնանային անձրև)
» V—VI —Սիօկումի (Աղջկայ սէրը)
Երկրորդ բաժանմունք.—
II. Նուագումն սամիսէնի վրա—Գիժ գետակ.
Նուագումն խոկումօյի վրա—Գիշեր. քամի

Երրորդ բաժանմունք.—
III. Ձայնի մշակումն զանազան դերերի համար, զանազան ձեւեր, խառնեալ շարժումներ եւ միմիկա։
1) Մայր, 2) Թափառաշրջիկ Բենտենկօզօ, 3) Աղջիկ, 4) Մանուկ, 5) Սէր, առաջին հայեացք, հարս, 6) Ծիծաղ, 7) Սարսափ։

Յիշեալ ծրագրի բոլոր նոմէրները կը կատարէ ՀԱՆԱԿՕ-ՕՕՏԱՆ
II. ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ
Դրամա 2 գործող.
III. ՕՏԱԿԷ ԱՂԱԽԻՆԸ
Կօմ. 1 գործող.
Օկիկուլի և Օտակէի գլխաւոր դերերը կը կատարէ ՀԱՆԱԿՕ-ՕՕՏԱՆ։ Ծրագրի երաժշտ. մասում կը լինեն Ջութակ և Թաւ-Ջութակ։
Ներկայացումների մասին բացատրութիւն կը տայ Ն. ՇԻՍՕՎ։
առ. Տոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում։ 396. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ
սրանով յայտարարում է, որ ամառվայ ԵՐԵՔ ամսվայ ընթացքում Բանկի պողպատեայ պահեստում վարձով տրվում են անվտանգ արկղներ
Ամենափոքրերը՝ № 1—3 ռուբլով.
Փոքրերը՝ . . № 2—3 ռուբ. 50 կոպ,
Միջակները՝ . № 3—5 ռուբլով. առ. 394. 3—1

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ շարունակութիւնը
նշանակված է շաբաթ, մայիսի 18-ին, երեկոյեան ժամը 7½-ին Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապարակ, № 7 ս. տ.).
ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Ընտրութիւն 2 անդամի «Աբովեան-Նազարեան» գրական ֆոնդի յանձնաժողովի։
2) Ընտրութիւն ուսուցչական ֆոնդի յանձնաժողովի անդամների։
3) Խուդադեան որբանոցի վերակազմման հարցը։
4) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի՝ հերթով հեռացող բժ. Մխիթարեանի, Ս. Լիսիցեանի և ինքնակամ հրաժարված Եփրեմ Եղիկօղլուի և Ձ. Մամուլեանի փոխարէն, 1 փոխ-անդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի։
5) Ընթացիկ հարցեր։
Այս ժողովը լինելով նախընթաց ժողովի շարունակութիւն՝ կը կայանայ որքան որ անդամ ներկայ լինի։
(2.) առ. 386. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
Շաբաթ, մայիսի 18-ին, 1913 թ.
ՓՈԽԱԴՐՎՈՒՄ Է
ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ:
(2.) առ. 388. 2—2

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՈՏՕՐԱԿՍՈՎ։
Ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանօվսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա. ա.) առ. 92 100—74

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Վելեամինօվսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—36

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

III

Բարեկարգված Թիւրքահայաստանի ստեղծումը առանձին նպաստաւոր նշանակութիւն ունի ներկայումս երեք պետութիւնների՝ Ռուսաստանի, Գերմանիայի և Անգլիայի համար, և եթէ փոքր ինչ աւելի թափանցենք իրերի իմաստի մէջ՝ նաև Թիւրքիայի համար։

Ռուսաստանը, որ աւանդական իր քաղաքականութեամբ առաջ է խաղացել Կովկասում և աստիճանաբար տիրել պարսկական և թիւրքական հողերին, նպաստելով եւրոպական կուլտուրայի տարածմանը և ճնշված ազգերի ազատութեանը, ներկայումս թէ քաղաքագիտական և թէ տնտեսագիտական նկատումներով համակրութեամբ է վերաբերվում Թիւրքահայաստանի բարեկարգութեան խնդրին։ Ռուսաստանը, սահմանակից երկիր լինելով, շահագրգռված է, որ իր հարեւան երկիրները լինեն բարեկարգ վիճակի մէջ, իսկ եթէ այդ երկիրները պէտք է ընկնեն մեծ պետութիւնների ազդեցութեան շրջանների մէջ, այն ժամանակ պահպանված լինեն իր շահերը լաւագոյն կերպով։ Եւ միթէ կասկած կարող է լինել այն բանում, որ եթէ Թիւրքահայաստանը սկսած 1875 թւից Սան-Ստեֆանոյի դաշնագրի համաձայն բարեկարգված լինէր, այժմ նա մի կուլտուրական երկիր կը լինէր երջանիկ իր համար և նպաստաւոր ռուսական առեւտրի, արդիւնաբերութեան և քաղաքական դիրքի համար։

Գերմանիայի համար Թիւրքահայաստանը կարեւոր է մի քանի տեսակէտներով։ Ինչպէս մի անգամ էլ նկատել էինք, Գերմանիան, որ այժմ ամուր կերպով ձգտում է հաստատվել Միջագետքում, կը գերադասէր իր կողքին ունենալ Թիւրքահայաստանի նման մի բարեկարգված օսմանեան երկիր։ Գերմանիան կը ցանկանար, որ կարողանար ազատօրէն ներմուծել Թիւրքիայի ծովեզրներից և երկաթուղիներով գերմանական և աւստրիական ապրանքներ դէպի Թիւրքահայաստանի խորքերը և տնտեսապէս նուաճել այդ երկիրը։ Նոյնպէս Գերմանիան սկսում է գնահատել հայ տարրի կուլտուրականութիւնը և յոյսեր է տածում, որ այդ տարրի միջոցով նա կարող կը լինի ընդարձակել և զարգացնել իր առեւտուրը և արդիւնագործութիւնը Միջագետքում, Կիլիկիայում և առհասարակ Անատօլիայում։ Վերջապէս՝ Գերմանիան Թիւրքահայկական բարենորոգումներով ցանկանում է համոզել օսմանցիներին, որ դա է ամենալաւ միջոցը պաշտպանելու օսմանեան շահերը Փոքր Ասիայի արեւելեան մասում։

Անգլիան ներկայանում է Թիւրքահայկական խնդրում՝ իբրև բուն դիւանագիտութեան մի ճարպիկ ներկայացուցիչ։ Անգլիան ներկայ դէպքում հանդիսանում է, իբրև բարեկամ Ռուսաստանի, որի հետ միասին պաշտպանում է Թիւրքահայկական րէֆորմները, իբրև աջակցող Գերմանիայի, որի բռնած դիրքը նա պաշտպանում է, իբրև համակրող և հովանաւորող հայերի, որոնց համար բազմատեսակ խոստումներ է արել տարիների ընթացքում իր պետական անձերի միջոցով, վերջապէս իբր պաշտպան Թիւրքիայի, որի հողերը նա ապահովում է օտար տիրապետութիւնից։ Իսկ միեւնոյն ժամանակ նոյն Անգլիան խստիւ հետեւում է իր ուրոյն, անգլիական քաղաքականութեան։ Անգլիան, որ այժմ սահմանակից է Ռուսաստանին Տիբէտի, Աւղանստանի և Պարսկաստանի կողմերից, ցանկանում է մի որոշ աստիճան իրաւունքներ պահպանել և Փոքր Ասիայի ռուսական սահմանների շրջանում։ Նա, որ պարտաւորվել էր Կիպրոսի դաշնագրով ապահովել Փոքր Ասիայի արեւելեան սահմանները, այժմ էլ շարունակում է վաղեմի քաղաքականութիւնը և ցանկանում է, որ Թիւրքահայաստանը համարվի եւրոպական հանրային իրաւասութեան տակ, որպէսզի ինքն եւս հարկաւոր ժամանակին որոշ իրաւունքներով հանդէս գայ և հողերի բաժանումների ժամանակ ձեռնտու սակարկութիւններ անէ։

Իսկ Թիւրքիա՞ն։ Այդ մասին միւս անգամ։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Մեզ հաղորդում են, որ «Бирж. Вѣд.» թերթի թղթակից Օլգինը, որ վերջերս ուղեւորվել էր Թիւրքահայաստան՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու մեր [illegible] վերջացնելով իր առաքելութիւնն այժմ վերադարձել է Կովկաս և երէկ գտնվում էր Ալեքսանդրապօլում։ Նա այս երկու օրս սպասվում է Թիֆլիսում։

—

«Գերմանիան և հայկական հարցը» խորագրով մի յօդուած է տպված «Веч. Вр.»-ում, որի մէջ ասված է. «Գերմանացիք յանձին Թիւրքահայերի տեսնում են իրանց համար օգտակար աշխատակիցներ Փոքր-Ասիայում տնտեսական նուաճումներ կատարելու համար։ Այդ պատճառով Գերմանիան իր ծրագրում դնում է հայկական հարցը, իբրև կենտրոնական խնդիրներից մինը»։ «Веч. Вр.»-ի կարծիքով, Ռուսաստանը եթէ ոչ հայ ժողովրդի շահերի համար, գոնէ իր սեփական շահերի նկատումով, պէտք է չը յապաղէ ձեռնարկել այդ պրօբլէմի լուծման։

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՀԵՐՔՈՒՄԸ

—

Լոնդոն, 16 մայիսի

Ես ձեզ հաղորդեցի, որ այստեղ կայացաւ եւրոպական զանազան հայասէր կոմիտէների կօնֆերէնցիան, որին, դժբաղդաբար, չը կարողացաւ մասնակցել անձամբ ռուսական պատուիրակը, որովհետև պրոֆ. Մաքսիմ Կովալեվսկին, որ ընտրված էր Պետերբուրգից և այդ ժամանակ գտնվում էր Պարիզում, անկարող եղաւ հասնել իր ժամանակին Լոնդոն, ուստի գրաւորապէս յայտնեց իր մասնակցութիւնը։

Ինչպէս յայտնեցի, կօնֆերէնցիան կայացաւ Համայնքների Պալատի դահլիճներից մէկում և այն հետեւանքն ունեցաւ, որ անգլիական կոմիտէի երկու պատկառելի անդամներ՝ Ա. Բրայս և Օ'Կօննօր հարցապնդումն կատարեցին պարլամենտում հայկական հարցի մասին։

Պէտք է ասել, որ Նուպար-փաշայի նախաձեռնութեամբ գործող ազգային-կաթողիկոսական պատգամաւորութիւնը ամեն ջանք գործ էր դրել, որ Եւրոպայի հայասէր կոմիտէները իրազեկ լինեն խնդրի էութեան։ Պատգամաւորները իրանց ձեռքի տակ ունէին մշակված նիւթեր և տեղեկագրեր։ Մի տեղեկագրի մէջ հրաւիրվում է Եւրոպայի ուշադրութիւնը այն կարեւոր հանգամանքի վրա, որ րէֆորմները շահաւէտ են իրան Եւրոպային տնտեսական և ֆինանսական տեսակէտից, որ նրանցից չը պէտք է շահվեն միայն հայերը և որ այդ րէֆորմները բնաւ չեն հանդիսանում իբրև թշնամական մի ակտ մուսուլման ժողովրդի դէմ։

«Times» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը մայիսի 11-ին գրած մի նամակով յայտնել է այն միտքը, թէ 1) Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակված պատգամաւորութիւնը ներկայացնում է միայն Ռուսաստանի, Եգիպտոսի և այլ երկիրների հայ ժողովուրդները, բացի օսմանեան կայսրութեան հայերից. 2) այդ պատգամաւորութիւնը թելադրել է Կ. Պօլսի հայոց պատրիարքին պահանջել, որ րէֆորմները երաշխաւորվեն ոչ թէ վեց մեծ պետութիւնների կողմից, այլ միայն նրանցից մէկի կողմից։

Հաղորդելով այդ լուրերը՝ թղթակիցը կցում է, թէ Թիւրք մամուլը, ընդունելով հանդերձ հայերի պահանջների արդարացիութիւնը, բացարձակապէս հակառակ է այն մտքին, որ րէֆորմների գործադրութիւնը յանձնվի օտարերկրեայ օֆիցերների։

[illegible] հաղորդած անճիշդ տեղեկութիւնների, ազգային-կաթողիկոսական պատգամաւորութեան պետ Պօղոս Նուպար-փաշան Պարիզից ուղղել է հետեւեալ նամակը «Times» լրագրին, գրված ամսիս 15-ից.

«Պարոն խմբագիր,

«Միայն այսօր կարողացայ կարդալ «Times»-ի մայիսի 12-ի համարի մէջ Կ. Պօլսից ստացված հեռագիրը։

«Այդ հեռագիրը պարունակում է երկու սխալ, որոնց ուղղելու համար կը խնդրէի ձեր թոյլտուութիւնը։ Նա ասում է, առաջ, որ հայկական-ազգային պատգամաւորութիւնը, նշանակված Նորին Սրբութիւն Էջմիածնի Կաթողիկոսի կողմից, նախագահութեամբ Նուպար-փաշայի, ներկայացնում է միայն Եգիպտոսի և այլ երկիրների հայերը, այլ ոչ օսմանեան կայսրութեան հայերը։ Այդ խմբագրութիւնը կամենում է հասկացնել տալ, թէ պատգամաւորութիւնը չէ հանդիսանում օսմանեան հայերի ներկայացուցիչը, մի բան, որ սխալ է։ Իրօք, պատգամաւորութիւնը նշանակվել է, յանուն հայ ժողովրդի, Նորին Սրբութիւն Կաթողիկոսից, որ գերագոյն հոգևոր Պետն է թէ օսմանեան հայերի և թէ աշխարհիս զանազան մասերում հաստատված հայերի։ Պատգամաւորութիւնը բացառապէս բաղկացած է օսմանեան հպատակներից. նա միակ միսսիա ունի պահանջել րէֆորմների գործադրութիւնը Ասիական Թիւրքիայի հայկական նահանգներում և նրա ծրագիրը ունի հայկական բոլոր կուսակցութիւնների հաւանութիւնը։ Ահա առաջին կէտի մասին ուղղումը։

«Կ. Պօլսի հեռագիրն ասում է, թէ պատգամաւորութիւնը թելադրել է Կ. Պօլսի պատրիարքին պահանջել, որ րէֆորմները երաշխաւորվեն ոչ թէ վեց պետութիւններից, այլ միայն նրանցից մէկից։ Արդ, ոչ միայն պատգամաւորութիւնը այդպիսի թելադրութիւն չէ արել, այլ նա, ընդհակառակը, ունեցել է սկզբունք պահել իրան Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի միջազգային հողի վրա, յօդուածի՝ որով մի կողմից Թիւրքիան պարտաւորվել է կատարել րէֆորմներ հայկական նահանգներում և, միւս կողմից, մեծ պետութիւնները պարտաւորվել են հսկել նրանց գործադրութեան վրա։ Հեռագրի մէջ սպրդած սխալը առաջ է եկել հաւանօրէն նրանից, որ հայկական րէֆորմների նախագիծը խմբագրելիս՝ քննվել էր այն միտքը, թէ կօնտրօլը յանձնվի մի մեծ պետութեան, իբրև Բեռլինի դաշնագիրն ստորագրող միւս մեծ պետութիւնների լիազօրի, բայց կարծիքները միաձայն էին ճանաչելու, պատգամաւորութեան հետ միասին, որ այդ խնդիրը մեր ձեռնհասութիւնից դուրս է, որ մենք պարտաւոր ենք միայն յենվել դաշնագրերի բնագրի վրա, պահանջելով մի միջազգային կօնտրօլ, և որ միայն մեծ պետութիւններին է պատկանում որոշել՝ թէ ինչ ձեւով կատարվի այդ կօնտրօլը։

«Ահա սրանք են, պարոն, այն երկու ուղղումները, որ ես սպասում եմ ձեր բարեացակամութիւնից տպված տեսնել, խուսափելու համար այն շփոթութիւնից, որ կարող է առաջանալ մտքերի մէջ, շփոթութիւն, որ շատերի շահն է պահպանել և որ կարող է վնասել մեր պաշտպանած դատին։

«Եւ որովհետև առիթը ներկայացել է ձեզ գրելու, թոյլ տուէք ինձ օգտվել նրանից հաստատելու համար, որ պատգամաւորութիւնը չէ պահանջում յանուն հայերի ոչ բաժանումն, ոչ անկախութիւն, ոչ քաղաքական աւտոնոմիա, մի բան, որ հայկական նահանգների ներկայ ազգագրական և աշխարհագրական պայմաններում, մենք ամենքս համարում ենք ուտօպիա. ոչ, մենք պահանջում ենք միայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով և Կ. Պոլսի մեծ պետութիւնների դեսպանների 1895 թ. մայիսի 11-ի յիշատակագրի մէջ ձևակերպված նախագծով խոստացված րէֆօրմների գործադրութիւնը։ Հետևաբար, մենք կամենում ենք մնալ օսմանեաններ, վարչական լուրջ րէֆօրմներով, հեշտ իրագործելու և երաշխաւորված մի միջազգային կօնտրօլով։

«Այդ րէֆօրմները, հարկ եմ համարում սակայն ճշդել, կը հաստատեն նոյնչափ յօգուտ մուսուլման ազգաբնակութեան, որքան յօգուտ քրիստոնեայ ժողովուրդների։ Նրանք նպատակ ունեն, դնելով վիլայէթները մի իմաստուն կառավարութեան ներքոյ, պաշտպանել բոլոր նստակեաց ժողովուրդները, թէ մուսուլման և թէ քրիստոնեայ, վաչկատուն ցեղերի աւազակութիւնների, անկարգութիւնների և սպանութիւնների դէմ։ Նրանք կը տարածեն, ամենքի վրա հաւասար արդարութեամբ, կարգը և կեանքի ու գոյքի ապահովութիւնը, իսկ այդ հնարաւորութիւն կը տայ ամենքին բարձրանալ և բարգաւաճել։

«Րէֆօրմները չը հասկանալ է նշանակում կարծելը, թէ նրանք ուղղված են մուսուլման ազգաբնակութեան դէմ. ընդհակառակը, նա կօգտվի նրանցով, և օսմանեան կառավարութիւնը, հէնց այդ հիման վրա, պատճառ չունի նրանց մերժել։ Անկասկած, նրա շահն է ընդունել այդ րէֆօրմները թէ իր հողի ամբողջութիւնը պահպանելու և թէ մի ամբողջ խռովեալ երկիր հանդարտեցնելու համար և նպաստելու նրա ամբողջ տնտեսական բարգաւաճման։

«Եւրոպան, որի աջակցութիւնն ենք խնդրում, այնքան արդարացի կը լինի շնորհել մեզ այդ աջակցութիւնը, որ մեր պահանջած համեստ և շատ օրինական րէֆօրմները, որոնք ոչ մի կերպով չեն շօշափում գահի պրէստիժը, կը դառնան—երբ կարգը կը հաստատվի և խռովութեան ամեն մի պատճառ կը չնչվի—մի էական և, ըստ մեզ, անհրաժեշտ ֆակտոր Ասիական Թիւրքիայի հողային ամբողջութեան, որի պահպանումը այսօր բոլոր մեծ պետութիւնների քաղաքականութեան հիմքն է կազմում»։

Մ.

ՑԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՐՈՊԷՆ *)

(Մի քանի խօսք հայկական հարցի պրոֆեսիոնալ ներկայացուցիչներին)

II

Չափազանց ցաւալի է արձանագրել այն փաստը, որ հայերը չը կարողացան հասունացնել հայկական հարցը քաղաքական իմաստով նոյնիսկ այն ժամանակ՝ երբ ունէին բոլոր առիթները և՝ ըստ երևոյթին՝ աջողութեան շանսերը։

Երբ մի պետութեան կենտրոնական կառավարութիւն խճճվում է ներքին բարդութիւնների և արտաքին՝ մինչ կատաստրոֆների աստիճան հասնող՝ վարկաբեկ անյաջողութիւնների անհատ ցանցի մէջ, երբ նա գլուխը կորցրած լարում է իր վերջին ոյժերը՝ գէթ կմախքը փրկելու այն ընկած մարմնի, որը կորցրած իր վաղեմի՝ գոնէ զինւորական՝ հմայքը, գալարվում է ծանր ճգնաժամի ճիրաններում, այդպիսի մի շրջանում բնական է և տրամաբանական՝ սպասել, որ նոյն այդ պետութեան շրջանակներում ապրող այս կամ այն ժողովուրդը, գտնվելով տնտեսա-սօցիալական և իրաւական բացառիկ պայմանների մէջ և հէնց այդ պատճառով էլ կանգնած լինելով իր պատմական վիճակը բարելաւելու կարևորագոյն պրօբլէմի առաջ, ունենար քաղաքական խելամտութիւն՝ իբրև նոր դասաւորութիւնից օգտվելու համար։ Երկրորդ տարին է արդէն՝ սկսած Թիւրք-իտալական պատերազմի սկզբից և նրա հետ զուգընթացաբար քայլող ալբանական յաղթանակալից ապստամբութիւնից մինչ այժմ, որ Թիւրք կառավարութիւնը օսմանեան պետութեան դարաւոր գոյութեան ամենածանր կրիզիսն է ապրում. կուսակցական անվերջ կռիւներ՝ յեղափոխական բռնկումներով, երկրի կենտրոնում, և պետական մահ սպառնացող անդադար պարտութիւններ երկրից դուրս։ Եւ այդ ամբողջ շրջանում, դժբաղդ ժխտաւոր շրջանում,—հայ ժողովուրդը՝ նրա վիճակով ու հարցով զբաղվող պրոֆեսիոնալ գործիչների բանակը, որ ամենամեծ կարիքն ու առիթն ունէր արթուն ու աչալուրջ լինելու, չը կարողացաւ շահագործել քաղաքական նոր սիտուացիան, պղտոր մթնոլորտի նպաստաւոր մօմենտները։

Որքա՜ն իրոնիա։ Ինքը՝ օտար Եւրոպան՝ խստանկատօրէն և բնական հետաքրքրութեամբ սպասում էր, որ Բալկանների հետաղալից համաքարկերի և Թիւրքիայի հոգեվարքային տնքոցների հետ միասին, Փոքր-Ասիայի դժգոհ տարրերը տարերային բռնկումներով հրապարակ պիտի իջնէին՝ առաջ նետելով իրանց վիրաւոր դատի ստահարված պահանջները։

Եւ որո՞նք են այդ դժգոհ, սոցիական իրաւազրկութեան ենթակայ տարրերը, եթէ ոչ հայերը կամ գոնէ գերառաւելապէս հայերը։

Դուք ուղղակի կարկամում էք, ամօթից կարմրում, երբ օտարը մասնագէտ, քաղաքական գործիչ, հրապարակախօս թէ սովորական ժուռնալիստ - հարցնում է ձեզ՝ հայէ՞ք, և իր խորին զարմանքը յայտնում այն մեռելային լռութեան, այն ապշեցուցիչ անտարբերութեան նկատմամբ, որ «Sturm und Drand»-ի ներկայ պերիօդում ցոյց են տալիս հայ ժողովրդի քաղաքական շրջանները, կուսակցական կազմակերպութիւնները։ Կը յանդգնէք դուք առարկել օտարին, որ անզէն ու սովալլուկ է Թիւրքահայ մասսան, անզօր՝ ինքնօգնութեան, անգիտակից քաղաքական շարժման, ցայտուն ըմբոստների համար։ Դուք, հայ ընթերցող, որ ծանօթ էք հայկական շարժման էջերի հետ, որ գիտէք, թէ ինչպէս մանր խմբերով, դժոխային զոհողութիւններով զինված «կարիճներ» էին անցնում սահմանը դեռ 90-ական թւականներին, երբ համիդեան երկաթէ րէժիմն էր թագաւորում և երբ ուրիշ հարկադրական առիթներ չունէր եւրոպական կօնցերտը՝ աչք նետելու դէպի Մերձաւոր Արևելք, դուք գիտէք, ասում ենք, որ շարժման նուիրված ուխտեալ ուտօպիստներ կային այն ժամանակ, որոնք պարտիզանական բռնկումներով Եւրոպայի ուշադրութիւնը գրաւելու և «գորդեան հանգոյցը» լուծելու հնարաւորութիւններ էին գտնում։

Իսկ այժմ... ո՞ւր են թաղվել և ինչով են զբաղված բէալ մտածողութեան ներկայ հրաշալի մօմենտին վաղեմի ուտօպիստները։ Պէտք կա՞յ կրկնել այն այբուբենական ճշմարտութիւնը, որ պետական ճգնաժամի ծայրայեղ միջոցին և եւրոպական դիւանագիտութեան ամբողջապէս կլանված, ուժգնապէս լարված բոլէին՝ Արևելքի վիճակով, ճշգրիտ արտայայտութիւնը Հայաստանի ցաւոտ վիճակի շատ աւելի իմաստ և քաղաքական նշանակութիւն կունենայ, քան Անդրանիկների հերոսական քաջագործութիւնները տասը տարի առաջ, կամ Պոլսի բանկի առումը 90-ական թւականներին։ Այժմ եւրոպական մամուլը այնքան կենդանի հետաքրքրութիւն է ցոյց տալիս, որ իւրաքանչիւր դէպք Փոքր Ասիայում կամ ամեն մի քայլ Կ. Պոլսի հայ պատրիարքարանի կողմից, արձանագրում է իր էջերում։ Իսկ առաջ Խանասորի ճակատամարտի կամ Վանի պաշարման նման դէպքերը կամ լռութեամբ էին անցնում և կամ Եւրոպայի հայերը պիտի մէկ կամ միւս թերթին խնդրէին՝ մի քանի տող հիւրընկալելու համար։ Թող Թիւրքահայ ժողովուրդը իր ինքնօգնութեան և ինքնագիտակցութեան փաստերով հասունացնէ իր քաղաքական պրօբլեմը, բևեռէ Եւրոպայի ուշադրութիւնը իր վրա և մի կողմից առաջադրի Թիւրք կառավարութեան, որ եթէ սա չէ ուզում վաղ թէ ուշ իր եւրոպական մասի կատաստրոֆները կրկնել ասիական բաժնում, սանձահարէ քիւրդ աւազակաբարոյ խաժամուժ ամբոխին, իսկ միւս կողմից ցոյց տայ Եւրոպային, որ եթէ նա բալկանեան պատերազմի վախճանի հետ՝ վախճանապէս կնքել է ուզում նաև խաղաղութեան գործը առ հասարակ Մերձաւոր Արևելքում և թանգ է գնահատում իր տնտեսա-առևտրական շահերի խաղաղ ու արագ զարգացումը Թիւրքիայում, ապա թող եռանդով իրականացնէ վերջապէս րէֆօրմների այն ողորմելի քաշքշուկ պատառը, որ երեսուն տարվայ ընթացքում երեսուն անգամ կոխոտեց իր ոտքերի տակ Աբդիւլ Համիդը և երեսուն անգամ նետեց այն հայերի երակներից ծորող արեան բաղանիքների մէջ։

B. Intimus

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—о—

Կ. ՊՈԼՍԻ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ

(Իթթիհադական «Թասվիրի էֆքեար» թերթի առաջնորդողը)

Հայոց պատրիարքարանին պատրաստած յիշատակագիրը տաշի օր մատուցուեցաւ եպարքոսութեան։

Ամեն անհատ ու տարր իրաւունք ունի պաշտօնէն ու անարգել նկատած արարքներուն դէմ գանգատ բառնալու և կառավարութենէն պահանջելու օրէնքին պաշտպանութիւնը։

Ուստի պատրիարքարանն ալ կատարեց այս դիմումը, որուն դէմ սկզբունքով կարելի չէ ոևէ առարկութիւն յարուցանել։

Սակայն անհունի տարբերութիւն կայ անհատի մը դիմումին, մէկ քանի հարիւրանոց խումբի մը և տարրի մը անունով կէս պաշտօնական մարմինի մը կատարած դիմումին միջև։

Այս մեծ տարբերութիւնները երկրորդ կարգի դիմումները կարգ մը պայմաններու կենթարկէ։ Իսկ այս պայմանները պաշտօնական և օրինական ըլլալէ աւելի խղճի հետ կապ ունին և հայրենասիրական են։

Անհատ մը կրնայ կացութիւնն ու պայմանները առանց ի նկատ առնելու գանգատ բառնալ, կրնայ իր իրաւունքներուն և շահերուն պահպանումը պահանջել։ Անկեղծ ու հայրենասիրական զգացումներ երբեմն առանց իսկ արտօնելու զայս, իրականին մէջ այս տեսակ գանգատներու և դիմումներու կարելի է անտարբերութեամբ նայիլ, որովհետև այս տեսակ ձեռնարկներուն արդիւնքը ոչ իսկ կը զգացուի և ոչ մէկուն ուշադրութիւնը կը գրաւէ։

Բնաւ անպատեհութիւն չէին ունենար, մինչդեռ գաւառի մը կամ նահանգի մը ժողովուրդին, քաղաքական կուսակցութեան մը կամ մարմինի մը ու տարրի մը ամեն տեսակ ձեռնարկները մասնաւոր կարևորութիւն ունին։ Բացառիկ վիճակներ այս կարևորութիւնը կաւելցնեն աստիճան մը ևս։

Ահա այս տեսակ բացառիկ կարևորութիւն ունեցող դիմումներուն ու ձեռնարկներուն մէջ՝ վերապահութեան կանոնին յետին աստիճան յարգանք տածելը հայրենասիրական պարտականութիւն մը կը դառնայ, և հարկ կըլլայ որ պաղարիւնութիւն և շրջահայեցութիւն ցոյց տրուի դիմումին ժամանակն ընտրելուն, դիմում կատարելու ձևին, և դիմումին միջոցին ցոյց տրուելիք ընթացքին և գործածուելիք լեզուին մէջ։ Այսպէս կը պահանջեն հայրենիքին շահերը։

Բնականաբար կարելի չըլլար կասկածիլ թէ անկեղծ էր դիմումը և անհրաժեշտ, երբ անիկա տեղի կունենայ այս պայմաններուն մէջ։

Հասկնալու համար թէ հայոց պատրիարքարանը իր յիշատակագիրը մատուցած ժամանակ ի նկատ առա՞ծ էր այս կէտերը թէ ոչ, և այս մասին վճիռ մը արձակելու համար հարկ է յիշատակագիրը մանրամասնօրէն քննել ու վերլուծել, և հիմնական տեղեկութիւն ստանալ, թէ անիկա իրօք կը պատշաճի կացութեան։ Հիմա ասոր ժամանակը չէ։ Մենք ճշգրիտ տեղեկութիւններ ալ չունինք։ Հետևաբար կը գոհանանք այս մասին խօսք ընել և կը բաւականանանք լոկ ընդհանուր խորհրդածութիւններով։

Պաշտօնական տեղեկութիւններէն կերևի թէ «յիշատակագիրը կը խօսի այլ և այլ նահանգներու մէջ հայոց ենթարկուած հարստահարութիւններուն և աւազակութիւններուն, ու այս արարքները գործող անձերուն նկատմամբ հետապնդութիւն կատարելու մասին պաշտօնեաներէն ոմանց անկարողութեան ու անհոգութեան դէմ գանգատ կը բառնայ։ Յիշատակագիրն ի վերջոյ կըսէ թէ ժողովուրդը հայերուն դէմ գրգռուած է և ասոնց կը վերագրէ բալկանեան պատերազմին պատճառն ու արդիւնքը և կը պահանջէ խիստ միջոցներ ձեռք առնել վերջ տալու համար այս վիճակին»։

Երկրին այլ և այլ մասերուն մէջ տեսնուած անպատշաճ վիճակը ամենէն առաջ կառավարութիւնն ի նկատ առած է և հարկ եղած միջոցներուն ձեռնարկուած է, ուստի բնականաբար ճիշդ չըլլար աւազակութիւններն ու յարձակումները լոկ մէկ տարրի դէմ ուղղուած նկատել և չափազանցել։ Աւազակներուն ու յարձակում գործողներուն դէմ հետապնդում կատարելու մասին ամեն ոք համաձայն է։ Նահանգներուն մէջ ժամանակէ մը ի վեր այս մասին ցոյց տրուած գործունէութիւնը կապացուցանէ, թէ կեդրոնական կառավարութիւնը խիստ ու կրկնակի հրամաններ տալով աւազակախումբերուն ձերբակալման ու նուաճման մասին՝ կաշխատի վերջնականապէս ապահովել անդորրութիւնը։ Ոչ ոք կուզէ, որ անկարող պաշտօնեաները պահուին իրենց պաշտօններուն վրայ։

Գալով այն կէտին, թէ բալկանեան պատերազմին արդիւնքը հայերուն կը վերագրուի, այս ծուռ գաղափար տածողները, տարակոյս չկայ թէ, շատ սահմանափակ են։

Ուրեմն հայոց պատրիարքարանին յիշատակագրին պաշտօնապէս ծանուցուած պարունակութեան և ընդհանուրին փափաքներուն և պահանջներուն միջև ոևէ անհամաձայնութիւն չկայ։ Եպարքոսն ըսաւ. «Ամեն ոք կրնայ վստահ ըլլալ, թէ կառավարութիւնը չպիտի թերանայ իր պարտականութեան մէջ։ Բայց հարկ է կառավարութեան դէմ դժուարութիւն չյարուցանել»։

Պաշտօնական այս յայտարարութիւնք բաւական են վստահութիւն ներշնչելու ամեն անկեղծ սիրտերու։ Եւ ցաւալի վիճակներուն վերջ տալու համար խիստ միջոցներ ձեռք առնելը՝ մէկ երկու օրուան մէջ կարելի չէ։ Կառավարութիւնը այս պէտքը ժամանակին գնահատած ըլլալուն համար է, որ անմիջապէս ձեռնարկեց բարենորոգումներու գործադրման և կընէ հարկ եղածը՝ բարենորոգումները արագացնելու համար։

Հետևաբար բնաւ ճիշդ չըլլար՝ ձեռք առնուած ու ձեռք առնուելիք միջոցներուն մէկ երկու շաբաթէն արդիւնք չտալուն հետևանօք պատասխանատու բռնել կառավարութիւնը։

Արդէն բաւական չէ կառավարութիւնը նեղել և պէտք եղած ատեն զայն պատասխանատու բռնել եղած կարգադրութիւններէն ժամ առաջ պահանջուած արդիւնքը ձեռք բերելու համար։ Պէտք է հասկնալ, թէ անոր պէտք է նիւթապէս և բարոյապէս օժանդակել և միանգամայն ըմբռնել, թէ կառավարութիւնը նեղելով յառաջ գալիք պատասխանատուութիւնը ընդհանուրին պիտի պատկանի։ Ուստի ըստ այնմ պէտք է շարժիլ։

Այս կէտերը ի նկատ առնել կը մաղթենք մեր բոլոր հայրենակիցներուն ու մեր բոլոր մարմիններուն, ո՛չ միայն հայրենիքին փրկութեան անունով, այլ բոլոր անհատներուն ու տարրերուն փրկութեան անունով։ Ցեղային պատճառներու վերագրել ուզուած ներկայ պատերազմը մեզ կորսնցնել տուաւ Ռումելին։ Սակայն ցանկութիւնք վերջ չեն գտած։

Ամեն օսմանցի թիւրքի, հայի, արաբի, քիւրդի ամենէն կարևոր պարտականութիւնն է զգուշանալ վերջին աստիճան ամեն տեսակ չափազանցութիւններէ և անհամբերութիւններէ, որ կրնան մեր երկրին մնացեալ մասերն ալ վիճակեցնել Ռումելիի ու Ալբանիոյ բաղդին։

Աւստրիոյ և Իտալիոյ ցանկութեանց առարկայ սակաւակեաց Ալբանիոյ կառավարութեան վիճակը ամենուս համար օրինակելի դաս մը պէտք է կազմէ։

(«Բիւզանդիոն»)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 մայիսի

Բէլգրադ.— Սկուպշչինա։ Պաշիչը կարդաց էկսպօզէ սերբ-բոլգարական յարաբերութիւնների մասին։ Սկսեց նա պատերազմի շարժառիթներից ու պատճառներից։ Պատերազմը աջողվեց, մեծ պետութիւնները յայտնեցին իրանց չէզոքութեան մասին։ Սակայն երբ սերբիական զօրքը յաղթական կերպով առաջ արշաւեց, Աւստրիան տեղեկացրեց Սերբիային, որ թոյլ չի տայ մուտք ունենալ Ադրիատիկ ծով։ Մեծ պետութիւնները ընդունեցին Աւստրիայի տեսակէտը։ Սերբիան հարկադրված էր հնազանդվել և յայտնեց, որ նրա զոհերը վարձատրութիւն կը ստանան ուրիշ տեղում։ Երբ պատերազմը աւարտվեց, ծագեց դժուարին ու փափկանկատ հարց նուաճված երկիրները բաժանելու մասին։ Սերբիան յոյս ունի, որ այդ բաժանումը տեղի կունենայ տուած զոհերի համապատասխան։ Սերբ-չեռնոգորական սահմանը վիճելի կը լինի որոշել։ Դժուարութիւնների դէպքում հարկ կը լինի դիմել ազգաբնակութեան րեֆերէնդումին, իսկ լուրջ տարաձայնութիւնների դէպքում՝ միջնորդ դատարանի։

Ապա Պաշիչը քննութեան է առնում Ալբանիայի սահմանները։

Յոյն-բոլգարական սահմանի վերաբերութեամբ Պաշիչը նկատեց, որ պատերազմի ժամանակ տեղի ունեցած դէպքերը դրդեցին Սերբիային ցանկանալ ընդհանուր սահման ունենալու Յունաստանի հետ։ Եւրոպայի ցանկութեան պատճառով Սերբիան ստիպված էր հրաժարվել Ադրիատիկ ծովափից։ Սերբիան յոյս ունի, որ դաշնակիցները բաւարարութիւն կը տան նրա ցանկութեան, որովհետև Սերբիան համաձայնեց հրաժարվել Ադրիատիկից։ Եթէ հարևան տէրութիւնները կարգելեն սերբերին ապրանքներ արտահանել ու ներմուծել նրանց երկիրների միջով, այն դէպքում Սերբիան կարող է այդ գործողութիւնները կատարել միմիայն յունական հողով։

Սերբ-բոլգարական յարաբերութիւնները բարեկամական են։ Սերբ-բոլգարական դաշնակցութիւնը բալկանեան դաշնակցութեան փորձաքարն է։ Սերբ-բոլգարական պայմանագիրը պէտք է ենթարկվի վերաքննութեան և գործադրվելու է համապատասխան նոր հանգամանքներին. պատերազմի դէպքերը գերազանցեցին պայմանագրով նախատեսածից։ Կառավարութիւնը կատարեց իր պարտականութիւնը մինչև վերջ, համոզված, որ զոհաբերութիւնները կը ստանան վարձահատուցումն։ Ադրիանուպոլսում Սերբիան բարեխղճօրէն կատարեց իր պարտականութիւնը։ Պայմանագրից դուրս, Սերբիան հինգ ամբողջ ամիս մնաց սպառազինված, որպէսզի բոլգարները ստանան Ադրիանուպոլիսը և Թրակիան։ Բոլգարիան ստացաւ աւելի, քան նախատեսված էր պայմանագրով. Սերբիան կորցրեց այն, որ իրաւունք ունէր ստանալ պայմանագրի համաձայն։ Վերջապէս, Բոլգարիան պէտք է Վարդարում հանդէս բերէր 100,000 մարդ, մինչդեռ բոլգարական շտաբը առաջարկեց փոխել այդ, որովհետև նրան ոյժեր հարկաւոր եղան Թրակիայում։ Սերբիան ժողովեց աւելորդ 100,000 մարդ՝ թերին լրացնելու համար։ Սերբերը Թրակիա ուղարկեցին 50,000 զինւոր և պաշարողական թնդանօթներ, որ Բոլգարիան չունէր։ Սերբիան պարտաւոր չէր օգնութիւն ուղարկել Մարիցայի հովիտը։ Սերբիան, կորցնելով դէպի ծով ունենալու մուտքը, պէտք է իրան ճանապարհ հարթէր դէպի Սալոնիկ, որին նա կը հասնէ, ունենալով ընդհանուր սահմաններ։

Յունաստանի հետ Սերբիան պահպանում է բարեկամական կապեր, բայց ժամանակները կարող են փոխվել առանց մեր մեղքի։ Սերբիայի լօյալութիւնը կարելի է նկատել այն հանգամանքից, որ ծովափը մաքրելու մասին վարվող բանակցութիւնների ժամանակ Սերբիային առաջարկում էին Վարդարի ամբողջ հովիտը Սալոնիկի հետ միասին, եթէ նա հրաժարվի Ադրիատիկից։ Թէև դա շահաւէտ էր Սերբիային, սակայն նա հրաժարվեց, գիտենալով որ դա հակառակ է դաշնակիցների շահերին։ Ներկայ րոպէին Սերբիան պահանջում է վերաքննել պայմանագիրը և հաւատացած է Բոլգարիայի բարեկամական զգացմունքներին։

—

Սօֆիա.—Պաշիչի դեկլարացիան ցնցող տպաւորութիւն թողեց բոլգար ղեկավար շրջաններում։ Կարծում են, որ այդ վարմունքով դժուարանում է հաշտութեան յետագայ բանակցութիւնների հնարաւորութիւնը։ Առանձնապէս տարօրինակ ու իրերի ընթացքին ներհակ է համարվում Պաշիչի այդ հանդէս գալը այժմ, երբ սերբ և բոլգար պրեմիերները պայմանաւորվել են տեսնվել մայիսի 19-ին սահմանագլխում համաձայնութիւն կայացնելու համար։ Դրութիւնը ճանաչվում է կրիտիկական։

—

Սալոնիկ.—Բոլգարների տեղափոխութիւնները Պանգէյի լեռներում շարունակվում են։ Բոլգարները գրաւել են Տօվլյանի բարձունքները, յոյները նահանջել են դէպի Լէվտէր։ Բոլգարական ուժեղ հետևակ վաշտեր ու թնդանօթաձիգ գնդեր գտնվում են Պրավիշտայի և Տօվլյանի միջև։ Բոլգարները թնդանօթներ են դրել Պանգէյի լեռան վրա, որ տիրապետում է Լէվտէրի հարթավայրին։

Տեղս եկաւ Վենիզէլօսը։ Ինտէրվիւյի ժամանակ Վենիզէլօսը դրութիւնը անուանեց կրիտիկական ու առաջարկում է միջնորդութիւն յոյն-բոլգարական վէճերը խափանելու համար։

Բոլգարական բերդապահ զօրքը երաժշտախմբով անցաւ ցոյցով քաղաքի միջով և նուագեց Թիւրքական օրհներգը Հասան Թահսին փաշայի տան առաջ։

—

Աթէնք.—Բոլգարները թնդանօթներ դնելով Պրավիշտայի բարձունքներին, մայիսի 14-ին առանց որևէ առիթի յարձակվեցին յունաց զօրամասի վրա։ Կռւի հետևանքները յայտնի չեն։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 մայիսի

Լօնդօն.—Դաշնակիցների անունից կազմված արձանագրութեան նախագիծը ուղարկվեց բոլոր կռւող տէրութիւնների կառավարութիւններին։ Բոլգար լիազօրները մայիսի 17-ին կը ստորագրեն նախնական հաշտութեան պայմանագիրը արտաքին գործերի մինիստրութեան մէջ, սակայն չեն մասնակցի ժողովին մնացած դաշնակիցների հետ արձանագրութեան քննութեան համար, որի խմբագրութիւնը ընդունեց Բոլգարիան։ Սերբ լիազօրները պատուէր ստացան ստորագրել հաշտութեան դաշնագիրը։ Հաւատացնում են, որ պայմանագիրը կը ստորագրվի նաև Յունաստանի կողմից։ Արձանագրութեան նախագծի մէջ մի յօդուած է պարունակվում, որ թոյլ է տալիս հաշտութիւն կնքելուց յետոյ ստորագրել առանձին պայմանագիր։

Րէյտէրը տեղեկացնում է, որ մայիսի 16-ին կայացաւ ժողով արձանագրութեան նախագիծը քննելու համար։ Թիւրքերը այդ հարցում միանգամայն համաձայն են բոլգարների հետ և ոչ մի արձանագրութիւն չեն քննելու մինչև հաշտութեան պայմանագրի ստորագրութիւնը։

Կ. ՊՈԼՍՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 մայիսի

Կ. Պոլիս.—Կայացաւ օսմանեան առևտրական պալատի արտակարգ նիստը Կ. Պոլսում գտնվող բոլոր օտարազգի առևտրական պալատների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Քննվեցին միջոցներ պահելու Կ. Պոլսի նախկին առևտրական նշանակութիւնը։ Ռուսաց առևտրական կոմիտէտի վերջին նիս-

---

*) Տես «Մշակ» № 106.

տերում քննվեց ռուսական ձեռնարկութիւնները աւելացնելու հարցը Թիւրքիայում, որը, չը նայած քաղքային պատերազմին, լի է հարստահարութիւններով, որոնք իրանց հերթական մշակութեան են սպասում։

—

Կ. Պօլիս.—Տեղս եկած Քեամիլ-փաշային հրամայվեց անմիջապէս հեռանալ Կ. Պօլսից։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 մայիսի

—

Լօնդօն.—Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնան ցերեկվայ ժամը $1^{1}/_{4}$-ին ժամանեց և Վիկտօրիա կայարանում դիմաւորվեց թագաւորական զոյգից, Ալեքսանդրա թագուհուց և միւս օգոստափառ անձերից։

—

Վիէննա.—Լրագիրները յօդուածներ են նուիրում այստեղ ինքնասպանութիւն գործած գնդապետ Րէդլին։ Վերջինս խառն էր լրտեսութեան գործում։ Րէդլը ուղարկված էր Պրագայից։

Պատգամաւորների պալատում Վիէննայի պատգամաւոր Նէյմանը հարցապնդում ներկայացրեց պետական ինքնապաշտպանութեան մինիստրին գնդապետ Րէդլի ինքնասպանութեան պատճառների մասին տարածված լուրերի առիթով. լրագիրների ասելով, հանգուցեալը արատաւորեց իրան լըրտեսութեամբ։

«Միլիտ. Րունդշաու»ն յայտնում է, որ Րէդլը ինքնասպանութիւն գործեց այն րօպէին, երբ նրան մտադրութիւն կար մեղադրել բարոյականութեան դէմ մեղանչելու և կարևոր բնաւորութեան ծառայական վաւերագրեր այլազգի գործակալին վաճառելու մէջ։

Րէյխստատը առաջին ընթերցումով վերջացրեց զինուորական բիւջէի քննութիւնը և յանձնեց այն բիւջէտային մասնաժողովին։

—

Բեռլին.—Րէյխստագի բիւջէտային մասնաժողովը բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ հաւանութիւն տուեց այն օրինագծի սկզբունքային հիմունքներին, որով միանուագ հանգամակութիւն է լինելու զինուորական կարիքների համար։

—

Բուխարեստ.—Սենատը 77 ձայնով ընդդէմ 9-ի ընդունեց ռումին-բուլգարական վէճի Պետերբուրգի վեհաժողովի արձանագրութիւնը։

—

Բուխարեստ.—Սենատի դռնփակ նիստում մինիստր-նախագահը բացատրեց, թէ ինչո՞ւ Ռումինիան չէզոք մնաց. «Ռումինիան հրաժարվեց դաշնակցութիւն կապել Թիւրքերի հետ, որովհետև պատերազմի նպատակն էր ազատել բալկանեան քրիստոնեաներին Թիւրքական բռնակալ լծից։ Դաշնակցելով Թիւրքերի հետ, Ռումինիան դրանով խոչընդոտ կը հանդիսանար նրանց արտաքսման Եւրօպայից, ապա Անդրդունայեան հարևանների հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանելը Ռումինիայի համար հանդիսանում է ակսիօմիա։ Ռումինիան չէր կարող նմանապէս միանալ դաշնակիցներին, որովհետև հասարակական կարծիքը դրա համար պատրաստված չէր»։ Մինիստրը ամբողջ ժամանակ դէմ էր զօրաժողովին։ Մինիստրի ճառը ընդունվեց ծափահարութեամբ։

—

Փարիզ.—Սենատի զինուորական մասնաժողովը բանաձև կայացրեց յօգուտ այն զօրամասերի, որոնք խնդրվում են կառավարութիւնից դրօշակների տակ պահված զինուորների պահպանութեան համար։

—

Պետերբուրգ.—Ֆրանսիական ծովակալ Լէբրին և ֆրանսիական «Ժաննա-դ-Արկ» յածանաւի հրամանատարը մեկնեցին Մօսկվա։

—

Փարիզ.—Ֆինանսական վեհաժողովում ձայնի իրաւունքի հարցը լուծվեց նպաստաւոր կերպով դաշնակիցների համար, որոնց տրված է վճռական ձայնի իրաւունք իրանց վերաբերեալ բոլոր հարցերում։

—

Մազագան.—Տամի Գլաուին յետ վանեց Տարուդանտից Խիբայի կողմնակիցներին։ Վերջիններից սպանվեցին 500 հոգի։ Խիբան փախաւ։

—

Փօրտսաիդ.—Գերմանական «Գեբէն» յածանաւը մեքենաները վերցնելով դիմեց դէպի Զմիւռնիայի ծովափը։

—

Կահիրէ.— Բէյրութի հեռագրական վարչութիւնը մերժեց բարենորոգումների կօմիտէին հեռագրեր ուղարկել Կ. Պօլիս և անթել հեռագրով հեռագիր ուղարկելը համարում է ապօրինի։

—

Մադրիդ.—Ֆինանսների մինիստրը ներկայացրեց պետական բիւջէն։ Եկամուտները կազմում են 1,200 միլիօն պեզետ, ծախքերը—1,156 միլիօն։ Մի շարք գումարներ ծախսվելու են պետական ինքնապաշտպանութեան միջոցների վրա։

—

Գիւրին.—Գիւրինում և Գիւրինի նահանգում ձերբակալվեցին շատ միապետականներ։ Երևան հանվեց, որ տերրօրիստական ակտեր են պատրաստվում գաւառական վարչութեան բարձրաստիճան պաշտօնեաների դէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՕՐԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

—

Երէկ, մայիսի 17-ին, առաջնորդարանում նշանակված էր Մեսրոպ եպիսկոպոսի երկրորդ հրաւէր-ժողովը այն անձանց, որոնք մասնակցել էին ապրիլի 22-ի ժողովին յօբելեանական յանձնաժողովի ընտրութեան առիթով։ Հրաւէրի մէջ ասված էր, որ ժողովը հրաւիրվում է կատարելու լրացուցիչ ընտրութիւն՝ ի տեղի հրաժարված 5 անձանց։ Հրաւէրներ ուղարկված էին նաև Թիֆլիսի յօբելեանական մասնաժողովին, «Մշակի», «Արօրի», «Տարազի» խմբագրութիւններին, վաճառականութեանը ի դէմս աւագի և այլոց։

Այս գործի և տեղի ունեցած միջադէպի մանրամասնութիւնները յայտնի են հասարակութեանը։ Ցայտնի է և այն, որ Վեհ. Կաթողիկոսը դեռ չը հաստատելով գոյութիւն ունեցող յանձնաժողովներից ոչ մէկը, ինչպէս և ապրիլի 22-ին ընտրվածը, հրամանագրել է Մեսրոպ եպիսկոպոսին ժողով գումարել միայն երկու յօբել. մարմինները, սակայն, չը գիտենք ինչու, հարկ է համարվել նորից նախկին ձևով վարվել։

Արդ, Թիֆլիսի յօբելեանական մասնաժողովը (բաղկացած 40 հոգուց, Հ. Առաքելեանի նախագահութեամբ), ամսիս 16-ին նիստի գումարվելով, կայացրեց մի որոշումն, որ յայտնեց անմիջապէս առաջնորդին։

Ահա այդ գրութիւնը.

«Ձերդ Սրբազնութիւն,

«Համաձայն ձեր շրջաբերական հրաւէրին՝ գալ առաջնորդարանում կայանալիք վաղվայ ժողովին, գրերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը տօնելու նպատակով ապրիլի 22-ի ժողովով ընտրված յանձնաժողովի անդամների թիւը լրացնելու համար, ի տեղի հրաժարվածների, նոյն նպատակով վաղ արդէն ընտրված մասնաժողովը, համաձայն իր այսօրվայ նիստում կայացրած որոշման, գալիս է ներկայիս հետևեալը պատասխանելու.

«1) Մասնաժողովը իր նախորդ երկու գրութիւններով առ ձեր սրբազնութիւնը պարզ ու որոշ դրել էր իր պայմանները, որոնցով պատրաստ էր նոյնպէս վաղ արդէն ընտրված մի յանձնաժողովի հետ միացեալ նոր յանձնաժողով կազմել՝ երկուստեք հաւասար թւով ընտրվածների, և գործել ձեր նախագահութեան ներքոյ և ըստ ամենայնի համաձայն Վեհ. Կաթողիկոսի կոնդակի պարունակութեան։ Ապրիլի 22-ի ժողովը մասնաժողովի պայմանները լրիւ չընդունեց, թողեալ դեռ այն հանգամանքը, որ մինչ նա ներկայացնում էր յանձնաժողովը իր ընտրողներով հանդերձ, մասնաժողովը ինքը միայն էր ձեր սրբազնութիւնից հրաւէր ստացած առանց իր ընտրողների։ Այդ հանգամանքը խախտեց երկուստեք հաւասար թւով ընտրվածներ ունենալու պայմանը։ Ուստի 22-ի ժողովով ընտրված 15 հոգուց 5-ը, որոնք մասնաժողովի կազմին էին պատկանում, հրաժարվեցին։ Արդ, 15 թիւը լրացնելու համար դուք նոր ժողով էք հրաւիրում՝ դարձեալ նախորդի հանգամանքով։

«2) Մասնաժողովս այդ հանգամանքը խախտումն է համարում արդարութեան և հաւանութեան գալ կարող չէ. նա, մնալով հաստատ իր յիշատակեալ գրութիւններին, դիմում է սրբազնութեանդ բարեհաճ հոգացողութեանն և յայտնում է հետևեալը. երբ մասնաժողովը ձեր կողմից կը ստանայ տեղեկութիւն, թէ յանձնաժողովը ընտրել է իր ներկայացուցիչներին նոր խառն յանձնաժողով կազմելու համար, ըստ մտաց Վեհ. Կաթողիկոսի հրահանգի, ինքն ևս անյապաղ իր ներկայացուցիչները կընտրէ հաւասար թւով՝ միւսների հետ ձեր նախագահութեան ներքոյ գործելու»։

—

Նոյնպէս «Մշակի», «Արօրի» և «Տարազի» խմբագրութիւնները յայտնել են, որ հնարաւոր չեն գտնում մասնակցել այս նոր ժողովին, քանի որ իրանց նախկին պայմանները չեն ընդունված։

—

Մեզ հաղորդում են, որ նաև վաճառականների աւագը հնարաւոր չէ գտել մասնակցել ժողովին։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆԴՐ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգում, մայիսի 8-ին, կայացաւ նոր երկաթուղիների յանձնաժողովի նիստը, նուիրված «Société d'etude» ընկերութեան ներկայացուցիչների միջնորդութեանը՝ տալ իրան՝ կօնցէսիան անդր-պարսկական երկաթուղու առջևի մասը շինելու համար։ Ընկերութեան ներկայացուցիչներն էին նրա ռուսական խմբի անդամներ՝ Պուտիլօվ և Վիշնեգրադսկի, իսկ անդր-պարսկական ընկերութեան շահերը պաշտպանում էին Խօմեակօվը (Պետական Դումայի նախկին նախագահ) և Զվենգինցեվը։

Ենթադրեալ երկաթուղու կառուցման նախագիծը առարկութիւններ չը յարուցեց յանձնաժողովի մէջ, բայց առաջարկվեց փոխել երկաթուղու ուղղութիւնը և թեքել մի քիչ դէպի արևմուտք, անցկացնելով Մուղանի դաշտով։ Այդ կարծիքի վրա պնդում էին հաղորդակցութեան ճանապարհների և զինուորական մինիստրութիւնները։

Յանձնաժողովի ենթադրութեան դէմ—յետաձգել նոր երկաթուղու նախագծի քննութիւնը՝ լուսաբանելու համար այս ու այն ուղղութեան նախապատւութիւնը—առարկեց Խօմեակօվը, որ շեշտեց, թէ ծրագրված 20 վերստանոց գիծը հանդիսանում է միայն սկիզբն ամբողջ անդր-պարսկական ճանապարհի կառուցման։ Որևէ երերումն նրա ուղղութիւնը որոշելու գործում անընդունելի է, որովհետև պէտք է ցոյց տալ ընկերութեան մասնակիցներին, թէ գործը իրապէս առաջ է քցված։ Խօմեակօվը ցոյց տուեց, թէ գրաւելու համար ասիական շուկան, որ հանդիսանում է համաշխարհային տընտեսական քաղաքականութեան կենտրոն, ձգտում են գերմանացիները և անգլիացիները, և մենք չենք կարող յապաղել, որպէսզի ձեռքից չը տանք այդ շուկան։ Րօպէն նպաստաւոր է, որովհետև դրամ ձեռք բերել դժուար չէ։

Նախագիծը պաշտպանեց արտաքին գործերի մինիստրութիւնը։ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան կողմից հաստատվեց, որ երկաթուղու ծրագրված ուղղութիւնը մեծ նշանակութիւն կունենայ Մօսկվայի առևտրա-արդիւնաբերական շրջանի համար, որի ներկայացուցիչները արտայայտվեցին յօգուտ այդ ուղղութեան՝ մինիստրութեան մօտ կայացած առանձին խորհրդակցութեան մէջ։

Ի վերջոյ Խօմեակօվը և Զվեգինցեվը յայտնեցին ձեռնարկողների կողմից, որ նրանք կը համաձայնէին կառուցանել և մի ճիւղ դէպի արևմուտք, Գանձակի վրայով, եթէ պահպանվի նախկին ուղղութիւնը՝ Աստարայի վրա։ Սկզբունքով յանձնաժողովը վերաբերվեց դրան համակրանքով, բայց խնդրի վերջնական լուծումը յետաձգեց մի քանի օրով, որպէսզի անհրաժեշտ թւանշանային հաշիւներն անէ. այդ հարկաւոր է մանաւանդ նրա համար, որ այդ երկաթուղին ճանաչված է ոչ շահաւէտ և միայն նրա անդրագոյն շարունակութեան դէպքում, նրա անշահաւէտութիւնը կարող է նուազվել։

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ

—

Անցեալ տարի, փետրվարի 11-ին, Մեծ-Ղարաքիլիսայի օրիորդաց դպրոցի երկյարկանի շէնքը ամբողջովին այրվեց։ Դպրոցների ժրաջան հոգաբարձութիւնը նոյն օրը խփած հեռագրով խնդրում էր աջակցութիւն նորը շինելու համար (տես «Մշակ» № 35, 1912 թ.)։

Իսկոյն տեղի ունեցան խորհրդակցութիւններ Թիֆլիսում և Մեծ-Ղարաքիլիսայում. կազմվեց այնտեղ շինարարական մասնաժողով։ Մասնաժողովը գիւղը, ըստ թաղերի, շրջանների բաժանեց. ցուցակագրեց, թէ ով ինչով կամ ինչպէս կարող է օգնել։ Այնուհետև մասնաժողովը Մեծ-Ղարաքիլիսա հրաւիրեց դուրս ցրված քիչ-շատ աչքի ընկնող ղարաքիլիսեցիները ընդհանուր ժողովի (օրը չեմ յիշում)։ Ոգևորութիւնը այնքան մեծ էր, որ կարծում էինք, թէ տարին լրացած՝ նոր դպրոցը պատրաստ կը լինի. սակայն հէնց այդ առաջին ընդհանուր ժողովը մի անգամ էլ համոզեց, որ՝ հայը ընդունակ է որքան շուտ ոգևորվելու, նոյնքան էլ շուտ պաղելու։ Ու ժողովը, որտեղ ներկայ էր և տողերիս գրողը, համարեա թէ արդիւնք չը տուեց։ Մարդիկ, որոնք հարիւրներ պիտի ստորագրէին, 5, 10, 15 ր. ստորագրեցին։ Ցուսահատեցնող էր երևոյթը։ Այդ էր պատճառը, որ ժողովին ներկայ եղող Սողոմոն Աբովեանցը, որ իր բացակայ եղբօր (Ալէքսանդրի) հետ պատրաստ էր մի շօշափելի գործ կատարել, վիրաւորված հայրենակիցների անտարբերութիւնից դէպի այդպիսի մի կենսական և անյետաձգելի գործ՝ ստիպված եղաւ ստորագրել միայն 1000 ր.։ Բայց և քաջալերելու համար հոգաբարձութիւնն և յուսահատված ուսուցչական խումբը՝ խոստացաւ մի տարով նրանց տրամադրութեան տակ դնել իրանց «կազարմա» կոչված մեծ տունը, որպէսզի աշակերտ-աշակերտուհիները դուրս չը մնան։

Այդ էլ մեծ բան էր։ Մենք վերադարձանք, բայց գործը այդ կէտի վրա կանգնած չը մնաց։

Դեռ այդ ժողովից առաջ, Աբովեանց եղբայրները, մեր մասնաւոր խորհրդակցութիւնների ժամանակ, պատրաստակամութիւն յայտնեցին իրանց հանգուցեալ ծնողների յիշատակին Մեծ-Ղարաքիլիսայում մի աչքի ընկնող բան անել։ Այդ ժամանակ նրանք յոյս ունէին, որ դպրոցի ճգնաժամի մէջ գիւղը իր ամբողջութեամբ, մասնաւորապէս նրա ունևոր դասը իրանց մենակ չեն թողնի, և իրանց կողմից բաւական կը լինի շինել դպրոցական հողի վրա այրված դպրոցի չափով մի շինութիւն. իսկ ես խորհուրդ էի տալիս և միանգամայն նպատակայարմար էի գտնում «կազարման» վերանորոգել, դպրոցական շէնքի վերածել բոլոր յարմարութիւններով և նուիրել եկեղեցւոյ դպրոցի 60-ամեայ յօբելեանի առիթով իրանց ծնողների յիշատակին։ Այս առաջարկութիւնը իրանք էլ յարմար էին գտնում իրանց և իրանց ծնողների յիշատակին ու պատւին վայել, սակայն մի յարգելի փափկանկատութիւն արգելք էր լինում։

Այս մտքով ու ոգով էլ շարունակվեցին մեր դիմումներն ու խօսակցութիւնները, որոնց ընթացքում ես ամեն կերպ աշխատում էի շօշափված փափկանկատութիւնը մէջտեղից վերացնել։ Միաժամանակ ես միշտ հրաւէր էի անում Մեծ-Ղարաքիլիսայի հոգաբարձութեանն ու դպրոցի աւագ ուսուցչին։

Իսկ շինարարական մասնաժողովը չէր դադարում իր մշակած ծրագրով աշխատել և մինչև անգամ յոյսը դարձեալ հասարակական օգնութեան վրա դրած՝ հիմնադրութեան օր նշանակեց, ամսիս 19-ին հրաւիրեց թեմակալ առաջնորդին։ Այս պատրաստութիւնն իմանալով, յայտնեցի նրանց՝ մի երկու շաբաթ էլ սպասել, յոյս ունենալով որ այս անգամ փափկանկատութիւնը կը վերանայ։

Եւ այս անվերջ աշխատանքի հետևանքն այն եղաւ, որ, ի պատասխանի իմ՝ ամսիս 12-ին գրած նամակիս, ամսիս 15-ի երեկոյեան ժամը 6-ին Ալէքսանդրօպօլից՝ Ս. Աբովեանից ստացայ հետևեալ հեռագիրը.

«Երէկ մեր գիւղի պատգամաւորներին՝ Նալբանդեանին և Սմաւոնեանին տուի իմ և եղբօրս համաձայնութիւնը՝ նուիրելու դպրոցին մեր տունը (կազարման) բոլոր յարմարութիւններով ի յիշատակ մեր հանգուցեալ ծնողների։ Ուստի խնդրում եմ տեսնվել եղբօրս հետ և միասին գալ Մեծ-Ղարաքիլիսա ամսիս 19-ին, որտեղ կը լինեմ և ես»։

Սրանից մի շաբաթ առաջ ինձ տուել էր համաձայնութիւնը մի տարի ևս դպրոցը թողնել յիշեալ տան մէջ, որի մասին ես հաղորդել էի արդէն աւագ ուսուցիչ Սմաւոնեանին իմ վարած բանակցութիւնների հետ միասին։

Այսպիսով՝ Մեծ-Ղարաքիլիսայի ծխական դպրոցը 62 տարիներ պատւով բոլորելուց յետոյ՝ այսօր, երբ գոյութեան 63-րդ տարում, թևակոխում է նոր և աւելի փառաւոր շըրջանի մէջ, միանգամայն ապահով որևէ անտեսական պատահարից։

Շինարարական մասնաժողովի հրաւէրի համաձայն՝ մենք ամսիս 19-ին կը լինենք Մեծ-Ղարաքիլիսայում, բայց ոչ նոր շինութեան հիմքը գցելու, այլ, հաւանօրէն, յօբելեանական հանդէսներ կազմակերպելու գործին մասնակցելու, որպէսզի առաջիկայ աշնան դպրոցը նոր փառաւոր շինութիւնը մտնի պատշաճ շքեղութեամբ։

Աբովեանց տունը, յատկապէս Սողոմոն և Ալէքսանդր եղբայրները մինչև այսօր էլ աչքի ընկնող ծառայութիւններ են արել հայրենի գիւղին, եկեղեցուն, դպրոցին. իսկ այս վերջինով դասվում են հայ անմահների շարքում։

«Կազարմա» կոչված մեծ տունը իր ընդարձակ բակով, այգով և կատարվելիք վերանորոգութեամբ առնուազն 35,000 րուբլի արժող նուէր է, որպիսին Աբովեանցների միջոցի համեմատ՝ մեր իրականութեան, մեր միջավայրի մէջ մեծ զոհողութիւն է և Մեծ-Ղարաքիլիսայից ու շրջակայքից դուրս ընդհանուր հայկական նշանակութիւն ունեցող աչքի ընկնող երևոյթ է։

Ցովսէփ ք. Տէր-Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մօսկվայի համալսարանում Վ. Տօտօմեանցը դիսերտացիա պաշտպանեց քաղաքատնտեսութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար։ Դիսերտացիայի թեման էր «Սպառողական կօօպերացիայի գործունէութիւնն ու պատմութիւնը»։ Տօտօմեանցը ստացաւ այդ աստիճանը։

◆ Սայաթ-Նովայի անուան նուիրված երեկոյթը, որ նշանակված էր այսօր Թիֆլիսի ժողովարանում, յետաձգվում է մայիսի 25-ին, շաբաթ օրը։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց մսի նոր սակագինը. ոչխարի մսի ֆունտը 18 կ., տաւարինը 16 կ. և գոմէշինը 10 կ.։

◆ Այսօր, երեկ. ժ. 8-ին, տեղի կունենայ Մօսկվայի Հնագիտական Ընկերութեան կովկասեան բաժանմունքի անդամների նիստը, ուր Լօպատինսկին կը կարդայ զեկուցագիր։ Նիստը հրապարակային է։

◆ Վաղը տեղի կունենայ Թիֆլ. վաճառականների ընկ. տարեկան ընդհ. ժողովը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերութեան լիազօրներից ոմանք խնդրել էին Պետերբուրգի պօլիտեխնիկումի պրոֆ. Ղամբարեանին ստանձնել ընկերութեան վարչութեան նախագահի պաշտօնը։ Ղամբարեանը ուղարկել է մերժում։ Այժմ նոյն խնդրով դիմումն է եղած առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութեան պաշտօնեայ Գուլիշամբարեանին։

◆ Թիֆլիսի առևտրական բանկի փայատէրերի ընդհանուր ժողովում ընտրվեց նոր խորհուրդ, որի անդամներ են Լեւոն Մանթաշեան, Մութաֆեան, Վ. Եղիազարեան, Սա. Մանուէլեան, Դ. Խարազեան։ Նոյն ժողովում զեկուցվել է բանկի կառավարիչ Կ. Ալիխանովի հրաժարականի մասին, որ ընդունվել է շատ սառը, միայն սովորութեան համաձայն իբրև պարգև որոշվել է տալ նրան 20,000 րուբլի։

◆ Այսօր Արտիստական թատրոնում տեղի կունենայ Կայսերական թատրոնների դերասանուհի Եկատերինա Վասիլ. Գէյցէրի երկրորդ ու վերջին երեկոն օրկէստրի մասնակցութեամբ, որին կը ղեկավարէ Կայսերական օպէրայի արտիստ Մ. Վօլֆ-Իզրայէլը։ Կը կրկնվի ի միջի այլոց յայտնի «Վակխանալիան», «Շօպէնի վալսը», «Քնած թագուհին» օպէրայից կտորներ և այլն։ Վօլֆ-Իզրայէլը հանդէս կը գայ նոր ծրագրով։

◆ Այսօր, շաբաթ, երեկ. ժամը $7^{1}/_{2}$-ին նշանակված է Կ. Հ. Բ. Ընկ. տարեկան ընդհ. ժողովի շարունակութիւնը։ Զբաղմունքի առարկաներն են՝ 1) ընտրութիւն 2 անդամի «Աբովեան-Նալբանդեան» գրական ֆօնդի յանձնաժողովի։ 2) Ընտրութիւն ուսուցչ. ֆօնդի յանձնաժողովի անդամների։ 3) Խուդաբեան որբանոցի վերակազմման հարցը։ 4) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամների և փոխ-անդամների։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է Թիֆլիսի Փոխ. Վարկային Ընկ. վարչութիւնից 150 ր. յօգուտ Ընկերութեան։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը Աւլաբարի հայոց եկ.-ծխ. դպրոցի 50-ամեակի առիթով որոշել է տալու նոյն դպրոցին 100 ր.։

◆ Անձրևի պատճառով մայիսի 12-ին չը կայացած զբօսանքը յօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. Ընկ. հետաքրքրական ծրագրով տեղի կունենայ վաղը, կիրակի, միևնոյն տեղում։ Հաւատացած ենք, որ հայ հասարակութիւնը, որ միշտ էլ համակրանքով է վերաբերվել դէպի յիշեալ Ընկերութեան բեղմնաւոր գործունէութիւնը, այս անգամ էլ իր ներկայութեամբ կը խրախուսէ Ընկերութեան ղեկավար տիկիններին, որոնք միայն յարգանքի արժանի են։

◆ Վաճառական Ա. Աւագեանը վճռել է բանալ Թաւրիզում օղեգործարան, որին աջակցում է ռուսաց իշխանութիւնը։

◆ Ըստ ոստիկանական տեղեկութեան, մայիսի 15-ին Թիֆլիսի կենտրոնական պօստային գրասենեակն է գնացել «Հօրիզօն» հայ թերթի ցրիչ պարսկահպատակ Խալաթեանը և 5 ր. 40 կ. փոխանակագիրը յանձնելիս յիշեալ գումարը տուել է մի երեք րուբլանոց թղթադրամով ու 12 հատ արծաթէ 20 կօպէկանոցներով, որոնք վերջում երևացել են կեղծ։ Պարզվել է, որ յիշեալ 12 կեղծ արծաթեայ դրամները և «Հօրիզօն» լրագրի խմբագրութեան գրասենեակից վերցված այդ տեսակ ուրիշ 6 դրամները ներկայ մայիսի 14-ին գրասենեակին յանձնել է, ուրիշ փողերի հետ լրագրի բաժանորդ Երևանի նահ. գիւղացի Ե. Խոչոեանցը (նա ինքը Ցակոբեան)։

◆ Կարողութիւնից զրկված Մարգարիտ Ցարութիւնեանը ներկայումս գտնվում է շատ թշուառ դրութեան մէջ, որի վրա դարձնում ենք ինչպէս բարեգութ անձերի, այնպէս և Կ. Հ. Բարեգործական Ընկ. խորհրդի ուշադրութիւնը, որին յիշեալ կինը չէ կարողանում դիմել ամօթխածութիւնից։ Կնոջ երիտասարդ որդին հիւանդ պառկած է տանը. կինը ունի և թոռ-աղջիկ։ Հասցէն է՝ Վէլիկօկնեաժսկայա փող. տուն Ջէմմէլի, № 40։

ԼՈՒՐԵՐ ՍՂՆԱԽԻՑ

—

Սղնախ, 7 մայիսի

◆ Վախճանվեց Սղնախի ս. Կարապետ մայր եկեղեցու միաբան Սարգիս աւ. ք. Տէր-Սահակեանը։ Հանգուցեալը մօտ 75 տարեկան էր. քահանայագործութիւն էր անում 50 տարուց աւելի։ Նրա մահից յետոյ նրա ծուխը պէտք է բաժանվի Սղնախի չորս քահանաների միջև, որովհետև նոր քահանայի պահանջ չը կայ։ 20 տարի առաջ Սղնախում կային 8 քահանայ. 5-ը ս. Կարապետ եկեղեցում, 3-ը ս. Գէորգում։ Ժողովուրդը գաղթեց, եղածներն էլ կորցրին իրանց ջերմեռանդութիւնը, ուստի և վճռվեց քահանաների թիւը սահմանափակել։

◆ Այս օրերս Սղնախում կազմվեց մի նոր ընկերութիւն, որի նպատակն է մատակարարել ժողովրդին երկրագործական գործիքներ։ Ընկերութիւնը կազմված է 30 մարդուց. ամեն մի անդամ վճարում է 1000 րուբ., առ այժմ իւրաքանչիւրը վճարել է 100 րուբ.։ Ընկերութիւնը ուղարկում է իր երկու անդամին—Պ. Գամրեկելի և Զ. Մախաշվիլի—Օդեսսա՝ անգլիական երկրագործական մեքենաներ գնելու համար։ Մեքենան կոչվում է «Վիկտորիա», որը վարում է, հնձում, կալսում, սղոցում, աղում և կարող է տանել մինչև 1000 պուդ։

◆ Ժամանակին հաղորդեցինք, որ Սըղնախում կազմվեց գիւղատնտեսական ընկերութիւն, որի անդամները կարող են լինել Սղնախի գաւառի գիւղատնտեսները, հարուստ և աղքատ, վճարելով տարեկան 1 ր. անդամավճար։ Այս օրերս լինելու է այդ ընկերութեան հիմնադիր ժողովը։

◆ 1899 թ. նախկին երէցփոխ բժ. Մովսիսեանը (այժմ բնակվում է Թիֆլիսում) հրաւիրեց ուսուցիչ Ս. Ձամաճեանին և նրա միջոցով կազմակերպեց քառաձայն եկեղե-

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный

ցական խումբ։ Ապա հրաւիրվեց խմբապետ Հ. Տէր-Աստուածատրեանը։ Խումբը մի քանի տարի երգում էր ս. Կարապետ մայր եկեղեցում և ներդաշնակ երգեցողութեամբ աղօթողներին գոհացնում։ Բժ. Մովսիսեանին յաջորդող երէցփոխները չը շարունակեցին նրա գործը. խումբը լուծվեց և քանդվեց։ Մինչդեռ մենք, հայերս այսպէս անտարբեր ենք, մեր հարեան վրացիները ամեն բանի մէջ մեզ գերազանցում են։ Նուբերս Վաքիրի գիւղում կազմվեց տեղացի երիտասարդներից և աշակերտներից քառաձայն խումբ, որն երգում է գիւղական եկեղեցում։ Գիւղացիները չափազանց ուրախ են այս երևոյթից։ N. N.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԸ ՇԱՀԻՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԵՐԳԵՐԻ ՄԷՋ

«Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդ ունայն է»,—ասաց Ժողովողը։

Թերևս աշխարհի ունայնութեան երգը ոչ ոք այնքան զօրեղ կերպով չի հնչեցրել մարդկանց ականջին, որքան սրանից 3000 տարի առաջ Դաւիթ թագաւորի որդի իմաստուն Սողոմոնը։

«Ես թագաւոր էի Իսրայէլի վրա Երուսաղէմում և հետամուտ եղայ իմաստութեան։

«Ես ինքս ասացի ինձ. եկ, մին սիրտս ուրախութեան նուիրեմ։

«Ես շինեցի ապարանքներ, տնկեցի այգիներ, արարի դրախտանման պարտէզներ պտղատու ծառերով ու ջրի աւազաններով։

«Ստացայ ծառաներ ու աղախիններ, բազմաթիւ հօտերի տէր դարձայ։

«Ժողովեցի ես ինձ համար շատ ոսկի, արծաթ և ստացուածք։

«Հրաւիրեցի ես ինձ մօտ երգող ու նուագող կանայք և մարդիկ ու դարձայ Երուսաղէմում աւելի մեծ, քան ինձանից առաջ եղողները։

«Եւ ամենայն ինչ, որ ուզեցին իմ աչքերը, չը զրկեցի նրանց. և սրտիս բոլոր ցանկութիւններն էլ կատարեցի։

«Եւ ահա տեսայ, որ արեգակի տակ ամենայն ինչ ունայնութիւն է»։

Հիմա տեսնենք, թէ որպէս է երգում աշխարհի ունայնութիւնը մեր բանաստեղծը. նա ի՞նչ է, որ՝

Սա մեզ տուն չէ յաւիտեան,
Կարճ օրվայ կեանք է միայն,
Անցաւոր աշխարհ է ու այն։

Այո, ունայն է աշխարհը, որովհետև՝

Ոչ կոտ ածն կը սաղանայ
Ոչ մնացածն, իմացիր։

Եւ՝

Ո քանի սաղ ես՝ չի ցամաքի
Աչքերիդ թացն, իմացիր։

Որովհետև չես կեանքիդ տէրը.

Գնա, մէկ էլ չի գայ ձեռ,
Ջուր է քաշածդ, իմացիր։

Մարդը կոյր խաղալիք է բաղդի ձեռին. ամեն բան կատարվում է նրա կամքից դուրս.

Ինչն է բեր՛լ, ինչ՞ կը տանի մէկ օր,
Հերթի կցած՝ ամենեցուն ողջ բոլոր
Ինչ է արդ օր կե ցաղը այս անցաւոր.
Երազ է մութ, անփարատ խաւարի պէս։

Եւ անփարատ խաւար, երազ է մարդու կեանքը, որովհետև նա «անքննելի է, անիմանալի և ճակատագիրն անջնջելի», որովհետև մարդս իր կեանքում հանգիստ ու դադար չունի և «այրվողը մի կաթիլ ջուր չի խմում այրողի ձեռիցը», որովհետև «վատն է միշտ անպատիժ և լաւն առանց վարձ».

Եւ՝

Դա գաղտնիք է բնութեան,
Անլուծելի գիտութեան։

Շատ է յոգնել, տանջվել բանաստեղծը կեանքի այդ առեղծուածը լուծելու, բայց՝

Պըռամ կեանքիս արևը, չը գտամ,
Ճառ ուզամ բռնել, թևն չը գտամ.

Որովհետև՝

Բնութիւնն այդ կողմից
Ինքն է յաճառ ամենից։

Բանաստեղծի յուսահատութիւնը աւելի է հիմնաւորվում, երբ նա աչքի անցնելով աշխարհիս վրա տիրող կարգերը՝ եղած կեանքիցն էլ «մի համ ու հոտ չէ առնում», որովհետև, ինչպէս ասածն է ասում, հասա ու բարակ մի գին է, որովհետև՝

«Միշտ լաւն ու առաքինին անվերմակ են մնում և բարի գործը՝ նուաղ ու բարակած»։

Եւ մենք

Մի դանով եկել ենք ներս,
Միւսով կըերթանք խակապէս,
Թէ ինձ հարցնես յառակ,
Ողջ երազ է, կասեմ ես։

Բանաստեղծի հիասթափութիւնը ոչ իր սեփական, այլ ընդհանուր կեանքից առնէք որպիսի յուսահատ և յուսի արտասունքներ է կորզում նրա շրթունքներից։

Ինչ է կեանքն. վերացական բառ միայն.
Նա խակապէս ոչ գոյն ունի, ոչ տեսակ.
Բերնից բերան խօսում են ճարտար միայն
Բայց իրապէս չի տեսել ոչ ով նրան.
Դա մի յոյս է մեզ խաբելու հնարած պատճառ։

Էլ ուր մնաց կեանքի գեղեցկութիւնը, էլ որտեղ է գտնվում կեանքի խորհուրդը, քանի որ մենք «կեանքի վրէն տեսնում ենք տապանաքար յանկարծ» և քանի որ մարդու համար՝

Երկու դուռն է և ճանապարհ.
Մարդն ծնած կը գայ և մեռած կերթայ։

— Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդ ունայն է,—ասաց Ժողովողը։

— Կեանքի վրա տեսնում ենք տապանաքար յանկարծ,—մրմռում է բանաստեղծը։

Ասացէ՛ք խնդրեմ, էլ ինչ տարբերութիւն կայ իմաստուն Ժողովողի և մեր հէգ բանաստեղծի միջև. չէ որ ունայնութեան փոլին հաւասար է տապանաքարի ծանրութեանը. բայց ոչ, երկուսի միջև տարբերութիւնը մեծ է և այս դէպքում առաւելութեան կշիռը թեքվում է մեր բանաստեղծի կողմը։

Ունայնութեան ողբը կարդացել են հին ժամանակ, կարդում են մեր օրերում, որովհետև աշխարհի խորհուրդը մարդիկ ի բնէ սխալ են հասկացել և մարդկանց երջանիկ կամ ապերջանիկ լինելու կարևոր խնդրի ծանրութեան կենտրոնը միշտ համարել են աշխարհի անկատար լինելը, այլ ոչ թէ մարդու իր անկատարելութիւնը։

Ըստ Շահիր Խաչատուրի՝ մարդու կեանքն անցնում է թշուառ աւելի զրկանքներով ոչ թէ այն պատճառով, որ անկատար ու վատ է ստեղծված աշխարհը, այլ որովհետև վատ և անկատար են մեր համայնական-քաղաքական-ընկերվարական կարգերը, որովհետև վատ է ինքը մարդը։

Չեմ ասում՝ աշխարհը փուչ է,
Կամ թէ ժամանակը փուչ է.
Այլ թէ՝ մարդկանց բռնած
Ձևը, եղանակը փուչ է։

Ահա՛ ուրեմն, գտնված է գաղտնիքի բանալին, գիտուննե՛ր, իմաստուններ և աշխարհի խելօքներ, էլ դուք մի գանգատվէք, թէ Աստուծու ստեղծագործած աշխարհը փուչ է և խաւար, թէ նա տանջանքի վայր է միայն. ոչ, երջանիկ կամ ապերջանիկ ապրելու թալիսմանը, ո՛վ մարդ, քեզ մօտ է գտնվում, դու պիտի անօրինես քո բաղդը, քո վիճակը։

Շահիր Խաչատուրը տանջանքի ծանրութեան կենտրոնը աշխարհից մարդկանց վրա փոխադրելով՝ գտնում է, որ ամէն չարիքի արմատը մեր ագիտութիւնն է.

Չի կարելի ոչինչ անել,
Քանի որ կոյր է ամբոխն.
Ի զուր է խօսելն աւել,
Քանի որ կոյր է ամբոխն։

Եւ՝

Քանի որ կոյր է ամբոխն,
Չի անցնի, ինչ որ գրես,
Չես ստանայ, ինչ որ խնդրես.
Պէտք է լռես և համբերես։

Էլ ինչպէս սիրտ անէ, ինչ հոգով նա դուրս գայ ժողովրդի առաջ.

Արդեօք ես վեր կենամ,
Ում ինչ հասկացնեմ.
Ուր դիմեմ և ուր գնամ,
Ումեն ինչ հասկացնեմ։

Առ հասարակ ագիտութիւնից և մեր տիրող հասարակական կարգերից ու բարքերից առաջացած անարդարութիւնն ու անհաւասարութիւնը այնպիսի ահռելի ծաւալ են ստացել, այնպէս կապել-կաշկանդել են մեր կեանքը, որ բանաստեղծը բառեր չէ գտնում նրանց որակելու համար. նա միայն բացագանչում է.

«Աշխարհ՞ ես, աշխարհ, անիրաւ աշխարհ, որ ղեկին տալիս ես, ինչպէս ասածն է ասում, Շաքի Շիրվան, միւսին չես տալիս խնդրվելու չուանն»։

Որ գնահատող չը կայ,
Լաւն ու վատը ջոկող
Մէկ գանազանող չը կայ։

Եւ այս ամենի դիմաց խորին վշտով համակված՝ բանաստեղծը գիտակցելով որ ոչ թէ աշխարհը, այլ մարդիկ իրանք են պատճառը իրանց թշուառ ու արկածալի կեանքի՝ դառն արտասունքով բողոք ու նախատինք է կարդում.

Ինչո՞ւ մարդը սակաւ,
Էշը շատ է աշխարհում.
Ինչո՞ւ վարդը սակաւ
Փուշը շատ է աշխարհում։

Եւ թող իմանան ժամանակակից ունայնութեան քարոզի սիրահարները, թող լսէ երեք հազար տարվայ հնաւորութեան գերեզմանում ննջող և միմիայն իր անձնական կրքերի համար ապրող ու աշխարհը իր նազանքների ու քմահաճոյքների համար շահագործող իմաստունը, որ՝

Չէր լինի այդ տեսակ ցաւեր,
Ոչ վշտեր և ոչ հոգսեր,
Թէ փոխանակ մարդի՝ կը լինէր
Ամարդը սակաւ աշխարհում։

Երկու ձեռքով ստորագրում ենք բանաստեղծի այս անգին խօսքերը։

Արտաշ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—o—

Ժողովրդական Տան Թատրոնում

60-ական թւականներին, ինչպէս յայտնի է, Կարինեանը իր պատմական պիէսներն էր կերտում։ Միևնոյն թւականներին կենցաղագրական պիէսներ էր գրում Թիֆլիսի հայ կեանքին մօտիկից ծանօթ Միք. Պատկանեանը՝ մրցակից հանդիսանալով Կարինեանին։

Ահա Պատկանեանի այդ պիէսներից մէկը, «Միջի մարդ կամ մօցիքուլը» անունով (4 գործ.), ներկայացվեց Ժողովրդական Տան Թատրոնում մայիսի 16-ին, Գ. Փիրումեանի օգտին։

Պիէսի մէջ հարազատ գծերով հանդէս է բերված Թիֆլիսի հին հայութեան կեանքից մի դէպք, որ տակաւին խօսեցնել է տալիս այժմ իսկ ժողովրդական աւելի ստորին խաւերում։ Դա միջի-մարդութիւնն է կամ մօցիքուլութիւնը, որ նիւթ է ծառայել նաև հանգուցեալ Գ. Սունդուկեանին, Տէր-Գրիգորեանին և այլն։

Բնական է, որ Պատկանեանի յիշեալ պիէսը իր ազդեցութիւնը թողած լինի Սունդուկեանի մի քանի գրուածքների վրա։

«Միջի մարդ» պիէսի համառօտ բովանդակութիւնը այս է։ Հալաբարցի արհեստաւոր Մելքոնը և Նատոն իրանց Կեկէլ անունով աղջկան ամուսնացնելու նպատակով դիմում են միջի-մարդ Եօվանէի օգնութեան, որ իր հոգին պատրաստ է ծախել մամօնայի համար... Եօվանէն իր հնարագիտութեան շնորհիւ գտնում է լեհ պրապորշչիկ Կարնեվսկիին, որին և ցոյց է տալիս Կեկէլին Բեթղեհէմի եկեղեցու բակում։ Ցիշեալ պարոնը վատնած է լինում պաշտօնական դրամը և պատրաստակամութիւն է յայտնում ամուսնանալ Կեկէլի հետ, ի հարկէ յոյս ունենալով ստանալ խոստացված 500 րուբլի օժտադրամը։ Սակայն վերջին գործողութեան մէջ, մինչ նշանը վերջացած՝ ամենքը պարում, ուրախանում են, մտնում է ժանդարմը իշխանութեան կողմից ուղարկված հրամանագրով պրապորշչիկ Կարնեվսկիին կալանաւորելու համար...

Պիէսը իր տիպերով՝ Թիֆլիսի հին կեանքի նիստ ու կացի, բարքերի նկարագրութեամբ պատկանում է այն գրուածքների թւին, որոնց, իրաւամբ, անհրաժեշտ է խնամքով պահել, որպէսզի յետագայ պատմագիրը իր ձեռքի տակ ունենայ նաև 60-ական թւականների Թիֆլիսի հայութեան կեանքի պարզ պատկերը, որ այնպէս ռելիէֆ լուսանկարված է անմահ Սունդուկեանի երկերում։

Դիմելով խաղին, պէտք է արձանագրենք այն ուրախ ու հաճելի տպաւորութիւնը, որ ստացաւ թատրոնը լցրած բազմութիւնը։ Փիրումեան վարպետօրէն ներկայացրեց Եօվանէին, որ իր ամպլուայի դերերից է. նոյնպէս շատ աջող էր տ. Ցամիկ Նատօյի դերում, որ պատկերացաւ բնականօրէն։ Սաբեանը Մելքօյի դերում կարող է աւելին տալ։ Առհասարակ միւս դերակատարները համերաշխ գործակցեցին պիէսի սահուն խաղին։

Փիրումեան բաւուն ծափահարութիւնների հետ ստացաւ երկու ընծայ և ծաղկեփունջ։

Վերջում խաղացվեց ծիծաղաշարժ «Խելքի տոպրակ» 1 գործ. վօդևիլը, դարձեալ մեծ գոհունակութիւն պատճառելով հանդիսականներին։

Երկար ժամանակ եղած չէինք Ժողովրդական Տան հայկական ներկայացումներին։ Իսկ տեսնելով վերոյիշեալ օրը ժողովրդական թատրոնի գլուխ անցած գործող համեստ աշխատաւորներին, մենք մեր սրտում զգացինք անհուն սփոփանք, որ աւելի է կրկնապատկվել այդ աշխատաւորների սէրն ու եռանդը իրանց գործունէութեան մէջ, որի սկզբնական շրջանում այնքան քաջալերեցինք ու խրախուսեցինք մենք «Մշակի» էջերում։

Կատարեալ աջողութիւն ժողովրդական մասսաների կրթութեանը հետամուտ թատրոնական համեստ գործիչներին։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երզրում, 12 մայիսի

Թիւրքահայ իրականութիւնը ուսումնասիրելու համար «Бирж. Вѣд.»-ի յատուկ թղթակից պ. Օլգենինը հայկական նահանգներու գլխաւոր վայրերը այցելելէ ետքը հոս ժամանեց։

Ան կրեր է հոգեկան ու ֆիզիկական շատ տանջանքներ իր անցած ճանապարհներուն վրայ ու յաճախ ենթարկուած է նոյնիսկ մահուան վտանգին, որպէս խղճամիտ թղթակից։

Տրուած իրազեկ տեղեկութիւններու համաձայն կրնանք յայտնել, որ ան կատարած է իր ուսումնասիրութիւնները լայն, բազմակողմանի կերպով ու բարեխղճօրէն։

Անոր յոգնատանջ աշխատանքը հսկայական ծառայութիւն մըն է Թիւրքահայ դատին ու համայն հայ ժողովրդին, ինչպէս նաև Թիւրքահայ դատով հետաքրքրուող օտար մամուլի ու քաղաքական շրջանակներու համար։

Ասով կուզենք յայտնելու հրապարակաւ մեր համակրանքը «Бирж. Вѣд.»-ի յարգելի խմբագրութեանն այն ուշադրութեան համար, որ նա ցոյց տուաւ դէպի Թիւրքահայերը՝ ուղարկելով յատուկ աշխատակից-թղթակից, ուսումնասիրելու դժոխք-իրականութիւնը տեղին վրայ։

Տասնեւութերորդ դարէն ի վեր մինչև այսօր Թիւրքահայերու բաղձանքն է եղած իրենց ճակատագիրը կապել մեծահոգի ու կուլտուրական ռուս ժողովրդի հետ։ Այդ տենչը այսօր աւելի եւս շեշտուած է ու ընդհանրացած։

Ցանկալի էր, որ «Вирж. Вѣд.»-ի խմբագրութիւնը հնարաւորութիւն տար պ. Օլգենինին Կովկասի և Ռուսաստանի մայրաքաղաքներու մէջ կարդալու դասախօսութիւններ կատարած ճանապարհորդութեան մասին և բացի այդ՝ միջոցներ տրուէին անոր ուսումնասիրութիւնները առանձին հատորով մը ամփոփ հրատարակելու համար։

Մեր սէրն ու համակրութիւնը կը նուիրենք պ. Օլգենինին, որ յանձն առաւ հայ ցաւի ու աղաղամարտի ականատեսը ըլլալ հայոց աշխարհի մէջ և կրել նոյն տանջանքը, որ բաժինն է եղած Թիւրքահայուն դարերէ ի վեր։

Մենք լիովին կը գնահատենք պ. Օլգենինի աշխատանքը, որ անիկա յանձն առաւ կատարել Թիւրքական բարբարոս պաշտօնեաներու նոյնիսկ մահուան սպառնալիքին ներքև։

Յուսով ենք որ անոր կատարած դժուար գործը գնահատանքի պիտի արժանանայ հայերու կողմէն նաև այլ տեղեր։

Խումբ մը երիտասարդներ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մոսկվայում հանդէսով թաղվեց «Рус. Вѣд.»-ի խմբագիր-հրատարակիչ Սօբոլևսկին։ Դագաղի ետևից գնում էր հազարաւոր բազմութիւն գրական, գիտական ու մամուլի աշխարհից, ուսանողներից և բանուորներից։ «Рус. Вѣд.»-ի խմբագրութիւնը բազմաթիւ ցաւակցական հեռագիրների թւում ստացել է շատ հեռագիրներ նաև Կովկասի հայ և մահմեդական ընկերութիւններից, կազմակերպութիւններից և լրագիրներից։

◆ Հիւմի-փաշան նշանակվեց Սիրիայի գեներալ-տեսուչ բարենորոգումների գործադրութեան համար։

◆ Հաստատվեց, որ Մահմուդ-Շէվքէթ-փաշան մի քանի անգամ եղել է էկս-սուլթանի մօտ դրամի խնդիրքով։ Վերջ ի վերջոյ նրան աջողվել է ստանալ Աբդիւլ-Համիդից 1.600,000 րուբլու ընկալագիր՝ պետութեան հերթական պէտքերի համար։

◆ Թիւրքաց կառավարութիւնը արտասահմանում պատուէր է տուել մի քանի խոշոր պատերազմական նաւեր։

◆ Կ. Պօլսում լրջօրէն քննվում է Թիւրքիայի մայրաքաղաքը Փոքր-Ասիա փոխադրելու հարցը, որովհետև Կ. Պօլսին վտանգ է սպառնում բուլղարների կողմից։

◆ Ֆելդմարշալ ֆօն-դէր-Գօլց փաշան հրաժարական է տուել։ Վիլհէլմ կայսրը դեռ դրական համաձայնութիւն չէ տուել։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ «Մ. ու Ա.» կոմիտէտը գաղտնի նիստում որոշել է մայրաքաղաքում անկարգութիւններ ծագելու դէպքում գործադրել մահապատիժ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ տեղի է ունեցել աւստրօ-ռումինական սահմանապահ զօրքերի ընդհարում։

◆ Անգլիայի ազդեցութեամբ Իտալիան համաձայնեց զիջել Ցունաստանին Եգէյեան կղզիների հարցում։

◆ Բուլղարիան պաշտօնապէս դիմեց Ռուսաստանին խնդրելով միջնորդ լինել նուաճված երկիրները դաշնակիցների հետ բաժանելու կնճռոտ հարցում։ Ռուսաստանը համաձայնեց պայմանով միայն, որ ինչպէս Բուլղարիան, այնպէս և Սերբիան ու Ցունաստանը արձակեն իրանց զօրքերը։ Ըստ ամին Ռուսաստանը կողմնակից է սերբերին որոշ վարձատրութիւն տալուն։

◆ Ցոյն-բուլղարական ընդհարումները տակաւին փոքր ծաւալով շարունակվում են։

◆ Բուլղարիան հարցրեց Ռումինիայից, թէ մնալո՞ւ է արդեօք չէզոք սերբ-բուլղարական պատերազմի դէպքում։ Ռումինիան տուեց խուսափողական պատասխան։

◆ Վիէննայից հեռագրում են, թէ իբր Ռուսաստանը վերջնականապէս հրաժարվել է միջնորդ լինել բալկանեան դաշնակիցների վէճի հարցում։

◆ Ներքին գործերի մինիստր Մակլակովը հաստատեց նախկին մինիստրի կարգադրութիւնը հրէաներին մշտական բնակութեան թոյլտւութիւն չը տալու մասին։

◆ Ներկայումս Պետերբուրգում չեն աշխատում 10,000 բանւոր անտեսական հողի վրա։

◆ «День»-ի ասելով յայտնի ակադեմիկոս-ֆիզիոլոգ Պավլովը խնդրագիր է ներկայացրել զինուորա-բժշկական ճեմարանի պրոֆեսորի կոչումից հրաժարվելու մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների

ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։ ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր. կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.
ե. 2. 383. 10—2

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻ

հայոց եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՀՄՈՒՏ ՏԻՐԱՑՈՒ

Բնակարան, ռոճիկ՝ 15 ր., արդիւնքով մինիմում 30 րուբ.։ Ցանկացողները թող շտապեն դիմել՝ Темиръ-Ханъ-Шура, ктитору Сафарянцу.
(ա. օ.) 384. 4—4

Ազգականիս համար

Շնորհակալ եմ Ձեզանից Ձեր «Սիտրովին» պրէպարատի համար, որը ես բերել տուի իմ մի ազգականի համար։ Մինչև օրս նա ոգելից ոչ մի խմիչք չէ գործածում, որի համար և յայտնում եմ Ձեզ իմ անկեղծ շնորհակալութիւնը։ «Սիտրովինը» դեղատներում շատ էժան է։ Ն. Ի. Սօկօլով։ Վօրօնէժ։ 8 նոյեմբ. 1912 թ.
(Մ. 18) (П. 63719) 2—2

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ. Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26,25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, մայիսի 19-ին, առաւօտեան ժամը 12-ին, նշանակված է ս. Նշան եկեղեցու ծխականների ժողով։ Ժողովի հարցերն են. 1) Երէցփոխի հաշւետւութիւնը, 2) Նոր երէցփոխի ընտրութիւնը, 3) Հաշւետեսների ընտրութիւնը և 4) Նոր շինութեան կառուցանելու հարցը։ Ցիշեցնում ենք յարգելի ծխականներին, որ այդ ժողովը երրորդն է և վերջինը. եթէ այս անգամ էլ չը կայանայ, այն ժամանակ երէցփոխի հաշիւները կը յանձնվեն հոգևոր իշխանութեանը։

Գրիգոր քահ. Շերմազանեան

395. 2—1

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ“

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։

(?.) 0—19

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Թարգմ. Սուրխաթեանի	30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Ջինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի	7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, Թարգ. Լ. Դանիէլեանի	5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, Թարգ. Դանիէլեանի .	5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Թարգմ. Լ. Դանիէլեանի . . .	10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

(3) 10—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный